

ԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՖԻՆՏԻՎՆԻ

ԱՐԱՏԵԼՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՖԻՆՏԻՎՆԻ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՂԹԱՄԱՐԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Աղթամարի Ս. Խաչ վանքը մեծ է ուրույն դեր է ունեցել հայ գրչության և մանրանկարչության արվեստների զարգացման գործում: Դարեր շարունակ վանքի աղթամար միաբաններն այսպեղ ընդօրինակել են գրչագրեր և ծաղկել դրանք երվիներանգ գույներով մազադաթ ու թուղթ կոկել, թանաք պատրաստել, գրադվել կազմարարությամբ և այլն: Ցավոք, այսպեղ գրված և նկարագրված ձեռագրերի մի զգալի մաս կորսության է մատնվել քաղաքի պարսկացիների կողմից: Ստորև մենք կփորձենք համառոտ ներկայացնել Աղթամարի գրչության կենտրոնի պատմությունը, ըստ գրիչների և մեզ հայտնի ձեռագրերի:

Նարեկավ, Աղթամարում ձեռագրեր են գրվել նաև ավելի վաղ, հարկապես 1113 թվականից հետո, երբ Արծրունյաց Դավիթ եպիսկոպոսը հիմնեց րեղի կաթողիկոսական Աթոռը, սակայն գրչության կենտրոնից մեզ հասած հնագույն ձեռագիրը գրվել է 1277 թվականին **Միմեոն** գրչի ձեռքով (ՄՄ, ձեռ. թիվ 208). «... գրեցաւ ծաղկազարդ և փիւզերալոյս Գործք սրբոց Առաքելոցն ձեռամբ յոգնամեղ ոգոյ Միմեոնի, ի խնդրոյ Խաչատուր քահանայի, ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ Սուրբ Խաչին»¹:

ԺԴ դարում հանդիպում ենք Դանիել կրոնավոր, Կարապետ կրոնավոր, Զաքարիա կրոնավոր, Կարապետ քահանա, Գրիգոր, Ավագ գրիչներին: Ընդ որում, Զաքարիան և Դանիելը նաև ծաղկել են ձեռագրեր: Ներկայացնենք այս արդյունավոր գրիչներին:

Դանիել կրոնավոր

Դանիել կրոնավորը որպես իր ուսուցիչ է հիշում Միմեոն պարվական և սրբասեր քահանային. վերջինս թերևս վերը նշված Միմեոն գրիչն է: Դանիել գրիչի ծնողներն են Շահապը և Թամարը. 1306 թ. նրանք արդեն վախճանվել էին: Գրիչն իր հիշատակարաններում նշում է նաև իր եղբայրներին ու քույրերին, իր հոգևոր եղբայրներին՝ Սյրեփանոս և Նովհաննես կրոնավորներին, որոնք հաճախ էին օգնում ջանադիր գրչին՝ թուղթ պրամադրելով:

Դանիել գրչից մեզ հասած առաջին ձեռագիրը Թովմա Արծրունու «Պատմություն րանն Արծրունեսաց» երկն է, 1303 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 10451). ձեռագիրը գրվում է Զաքարիա Ա Աղթամարցի Կաթողիկոսի պարվերով Սյունյաց արքեպիսկոպոս Սյրեփանոս Օրբելյանի համար: 1306 թ. Դանիել գրիչն ընդօրինակում է Սարգիս Շնորհալու «Մեկնություն Կաթողիկեայց թղթոց» երկը կրկին Զաքարիա Աղթամարցի Կաթողիկոսի պարվերով, այս անգամ Լիմ անապատի համար (ձեռագիրը մեզ չի հասել), 1307 թ.՝ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկը (ՄՄ, ձեռ. թիվ 4881)², 1309 թ.՝ Պողոս առաքյալի թղթերը (ձե-

¹ «Մայր ցուցակ հայրենեւն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի», հ. Ա, Եր., 1984, էջ 929-932: «Նայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար, կազմ.՝ Ա. Մաթևոսյան, Եր., 1984, էջ 469-470:

² Նայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 12-14, 40-41:

ռազմիկը կորած է)³, 1312 թ.՝ Ճաշոց, որը 1371 թ. հավելում է Ջաքարիա գրիչը (ՄՄ, ձեռ. թիվ 4687), 1312 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4801), 1313 թ.՝ Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4890), 1316 թ.՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 976). ընդ որում 1316 թ. նա արդեն եպիսկոպոս է⁴:

Կարապետ կրոնավոր

Դանիել եպիսկոպոսի աշակերտն է իր եղբոր՝ Թովմայի որդի Կարապետ կրոնավորը: Կարապետ գրիչի ընդօրինակմամբ մեզ հայրնի են հետևյալ ձեռագրերը. Ճաշոց, 1319 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4738), Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոցը», 1333 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4674), Անկարան, 1354 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 2843), որի ծաղկողը Ջաքարիան է, 1358 թ.՝ Անկարան (ձեռագիրը կորած է)⁵:

Կարապետ կրոնավորի աշակերտներն են Ջաքարիա և Կարապետ գրիչները: Ըստ Ջաքարիայի 1371 թ. ընդօրինակված Ճաշոցի հիշարակարանի, այս թվականին Կարապետ կրոնավորն արդեն վախճանվել էր:

Ջաքարիա Աղթամարցի

Ջաքարիայի ծնողներն են Մկրտիչ քահանան և Թանկ խաթունը, եղբայրներն են Կարապետ քահանան, Նովհաններ և Խաչիկը. ընդ որում Կարապետը ևս ընդօրինակում էր ձեռագրեր, իսկ Նովհանները՝ թուղթ կոկում: Նրանց ուսուցիչը, ինչպես արդեն նշել ենք, Կարապետ կրոնավորն է: Ըստ 1371 թ. գրչի Կովմայի Կաթողիկոսի՝ Կարապետ կրոնավորի կային Աղթամարում, նրանք 15 հոգի էին. «Կրկն Ներսէս Կաթողիկոս՝ հեզահոգի և աննեզ սրբի և հոգով, և ազգական նորին՝ Կրկն Ջաքարայ՝ սրբահոգի և առաքինի և ժիր քան զամենայն, և պարտական ծերունի և ալեք ծաղկեալ հարքս մեր՝ զԿարապետ կրանաւոր, զՍարգիս, և զԾերուն, որ են մեզ խրատաւորք և պահապան և քաջալերիչ ի գործս բարիս և ի վարս առաքինութեան, ընդ նոսին և զմեր ընկերակիցքս՝ զԳրիգոր և զՍրեպիանոս, զԹովմայ և զԱստուածաւորք, զԿոստանդ և զԽաչիկ, զԱնկարիս և զՏիրացու, և զեղբայրս մեր՝ զԿարապետ քահանայ»⁶:

Ջաքարիային որպես մանրանկարիչ անդրադարձած Ն. Նակոբյանը նրա մասին գրում է. «Ջաքարիայի գործունեությունն ընդգրկում է մոտ 45 տարվա ժամանակահատված (1355-1403թթ.): Նա վայելել է մեծ հեղինակություն: Նրան անվանել են «վարպետ գրագիր», «փիլիսոփայ»: Երկրի տարբեր գավառներից նրա մոտ եկել են աշակերտելու, պարավիրել են ձեռագրերի նկարագրողումներ...»⁷:

1371 թ. Ջաքարիա փիլիսոփայի ընդօրինակած Ճաշոցը մեկ ամբողջություն է կազմում 1312 թ. Դանիել գրչի ընդօրինակած Ճաշոցի հետ (ՄՄ, ձեռ. թիվ 4687): 1385 թ. գրչն ընդօրինակում է ևս մեկ Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4870), 1390 թ.՝ Անկարան (ՄՄ, ձեռ. թիվ 4941). վերջինիս կազմողը Սարգիս քահանան է: 1393 թ. նա ընդօրինակում և ծաղկում է Անկարան (ՄՄ, ձեռ. թիվ 4908), որը կազմում է Եղիա Արզիլանցին, 1399 թ.՝ Անկարան (ՄՄ,

3 Յուզակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանոց ի Սերասպիա, կազմ.՝ Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961, թիւ 3:

4 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԴ դար, կազմ. Լ. Խաչիկյան, Եր., 1950, էջ 46-48, 85-87, 93-94, 120:

5 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԴ դար, էջ 154-155, 259-260, 408-409, 440:

6 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԴ դար, էջ 495-496:

7 Ն. Նակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Ա, Եր., 1976, էջ 73:

ձև. թիվ 5510)⁸: Անթվական են Ջաքարիայի ընդօրինակած երկու աւերարաններ. սրանցից առաջինը նկարագարում է Թուման (ՄՄ, ձև. թիվ 10522)⁹: Ջաքարիա կրոնավորը նաև շնորհալի ծաղկող է: Նա, բացի իր՝ 1393 թ. գրած Աւերարանից, ծաղկել է իր եղբայր Կարապետ գրչի՝ 1354 թ., Ավագ գրչի՝ 1377 թ. գրած ավերարանները, Թումայի հետ միասին՝ Գրիգոր գրչի՝ 1355 թ. Աւերարանը:

Կարապետ քահանա

Ջաքարիա գրչի եղբայրն է Կարապետ քահանան (կողակիցը՝ Դուռնկեր):

1368 թ. նա ընդօրինակում է Աւերարան (ՄՄ, ձև. թիվ 10116), 1373 թ.՝ Թումայ անունով արեղայի հետ Ժողովածու (ՄՄ, ձև. թիվ 2001), 1378 թ.՝ Գրիգոր Նարեկացու «Մարտան ողբերգութեան» աղօթագիրքը (ՄՄ, ձև. թիվ 5558¹⁰), 1389 թ.՝ Ճառընտիր¹¹, 1392 թ.՝ Աւերարան¹²: Ջաքարիա կրոնավորի և Կարապետ քահանայի արվեստի շարունակողներն են Կարապետի որդիներ Դանիել և Թումա գրիչները, եղբոր որդիներ Թումա կրոնավորը և Գրիգորը. նրանց մասին՝ քիչ ավելի վար:

Գրիգոր գրիչ

Գրիգոր գրիչի ծնողներն են Անդրեսար և Փառացր, վարժապետները՝ Մխիթարը և Տիրապուրը: Գրիչը 1353-54 թթ. ընդօրինակում է Ժողովածու (ՄՄ, ձև. թիվ 5600), 1355 թ.՝ Աւերարան, որը ծաղկում են Ջաքարիա փիլիսոփան և Թումա քահանան (ՄՄ, ձև. թիվ 4915), իսկ ձեռագրի համար թուղթ է կոկում և վարպետներին «սպասարոմ»՝ Տոնապար¹³:

Ավագ դպիր

Ավագ գրիչից միայն մեկ Աւերարան է մեզ հասել՝ գրված 1377 թ.: Վաղածամ մահվան պատճառով գրիչը չի հասնում այն գլխագրել և ծաղկել, ուստի և նրա գործը շարունակում է Ջաքարիա փիլիսոփան (ՄՄ, ձև. թիվ 6402)¹⁴:

ԺԴ դարի գրիչների և ձեռագրերի մասին խոսքն ավարտելով՝ ավելացնենք, որ որոշ փյոյակների համաձայն 1363 թ. Աղթամարի վանքում գրվել է ևս մի Աւերարան: Յավոք, ձեռագիրը կորած է, և անհայտ է նաև գրիչի անունը¹⁵:

Ի փարբերություն այլ դարաշրջանների, ԺԵ դարում Աղթամարում գրված ձեռագրերն ավելի մեծաքանակ են: Առաջին գրիչը, որին մենք հանդիպում ենք այս դարաշրջանում, Դանիել քահանան է:

Դանիել քահանա

Գրիչը Կարապետ քահանայի որդին է: Նա իր հորից և հորեղբորից՝ Ջաքարիա փիլիսոփայից է սովորել գրչության և մանրանկարչության արվեստները: Դանիելի կրպակը

8 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԴ դար, էջ 495-496, 553-554, 583-584, 605-606, 624:

9 Երկրորդ ձեռագիրը մեզ չի հասել. փես **Յակոբ Ժ. Վ. Քոսեան**, Յուզակ հայերեն ձեռագրաց Արժնեան վարժարանի ի Կարին. «Նանդեա ամսօրեայ», 1961-1962 թթ., թիւ 19:

10 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԴ դար, էջ 527:

11 Սույն ձեռագիրը մեզ չի հասել, փես «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԴ դար, էջ 577-580:

12 Այս ձեռագիրը մեզ չի հասել. «Յուզակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», կազմ. Երուանդ Լալայեան, Թիֆլիս, 1915, թիւ 107:

13 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԴ դար, էջ 405, 413-414:

14 Տե՛ս անդ, էջ 522:

15 «Die Armenischen handschriften des klostere von Argni (Arghana)». Von dr. Friedrich Müller. Wien, 1896, p. 3, nr. 119.

եղբայրը Թուման է, որն օգնում էր նրան թուղթ կոկելով. միաժամանակ եղբորից սովորում է գրչության արվեստը: 1436 թ. Դանիել գրիչն արդեն քահանա է, այս թվականին ընդօրինակված իր գրչագրում նա հիշում է կնոջը՝ Շամսա-Նաթունին և իրենց զավակներին: 1441 թ. Անտարանում Դանիելի որդիներից Սրեփաննոսն արդեն նշված է որպես կրոնավոր, Նովհաննեսն ու Զաքարիան՝ օգնում են իրենց հորը թուղթ կոկելով: Ձեռագրում գրիչը սիրով տալիս է նաև վանքի միաբանների անունները՝ «զապասաորքս սուրբ փառաբանի»՝ գնեմ փիլիսոփայքն զԹումայ, և զՄարգիս, և զԽաչիկ, և զՈհաննէս, և զԱնտարիս, և զՆերսէս, զՅովաննէս փակակալ, և զԲարսեղ, և զՅովաննէս, և զՅուսէփ, և զաշակերտքն մեր՝ զՈհաննէս և զՆերսէս, որ հանապազ աղօթեն բազկապարած մաղթանօք զփրկութիւն ամենայն աշխարհի»¹⁶:

Դանիելից մեզ հայրնի վաղագույն ձեռագիրը 1403 թ. Անտարանն է, որ նա գրում է իր հոր՝ Կարապետ քահանայի հետ: Այն նկարագրողում է Զաքարիան, կազմում՝ Մկրտիչ կալսկոպոսը (ՄՄ, ձեռ. թիվ 4923): 1404 թ. Դանիելն ընդօրինակում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4787), 1409 թ.՝ Ճառնարի (ՄՄ, ձեռ. թիվ 994), 1412 թ.՝ Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 9093): 1436 թ. Դանիել քահանան գրում, ծաղկում և կազմում է Անտարան (ՄՄ, ձեռ. թիվ 5543), 1441 թ.՝ Անտարան, որը ծաղկում է Թումա Մինասնցը (ՄՄ, ձեռ. թիվ 5515)¹⁷, 1444 թ.՝ Ճաշոց (ձեռագիրը կորած է)¹⁸:

Թումա կրոնավոր (որդի Կարապետի)

Թումա գրիչը Դանիել գրիչի կրթակերպ եղբայրն է և աշակերտը, նրա հայրը Կարապետ քահանա գրիչն է, հորեղբայրը՝ Զաքարիա փիլիսոփան: Թումայից մեզ հասել է մի Անտարան, գրված 1418 թ., որը մանրանկարել և կազմել է Դանիել քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 5512)¹⁹: 1422 թ. Թուման ավարտում է Վարագա վանքում սկսված Աստուածաշնչի ընդօրինակումը (ՄՄ, ձեռ. թիվ 207)²⁰: 1426 թ. Թուման ընդօրինակել է ևս մի Անտարան²¹:

Թումա կրոնավոր (որդի Խաչիկի)

Թումա կրոնավորն ու նրա եղբայր Գրիգոր քահանան Կարապետ և Զաքարիա գրիչների եղբոր՝ Խաչիկի զավակներն են, նրանց մայրը Ազիզմելքն է: 1421 թ. Թումա կրոնավորը, որին կոչել են հռչակավոր քարտուղար, գրում և ծաղկում է Ճաշոց (ՄՄ, ձեռ. թիվ 4695)²²:

Աղթամարի վանքում գրված, սակայն կորած երեք ձեռագրերի մասին ևս մենք ունենք տեղեկություններ, որոնցից յուրաքանչյուրի գրիչն իրեն անվանում է Թումա կրոնավոր: Սրանցից առաջինը Անտարան է և գրվել է 1918 թ.²³, երկրորդը՝ Ճաշոց է, գրվել է 1419 թ.²⁴,

16 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Եր., 1955, էջ 524:

17 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 40-41, 47, 97, 135-136, 463-464, 524-525:

18 Տե՛ս Գ. Փիրղալեմնյան, Նօսրաթ հայոց, Կ.Պոլիս, 1888, էջ 134-135:

19 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 216-217:

20 «Մայր ցուցակ հայրենի ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենաղարան», հ. Ա, էջ 921-930:

21 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 357: 1433. Ուրանց գյուղում Թուման ընդօրինակում է Անտարան և նշում, որ պարերազմի հետևանքով իրենք փախսարական են եղել Աղթամարից (տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 433: ՄՄ, ձեռ. թիվ 4963):

22 Տե՛ս անդ, էջ 251-252:

23 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 217: Ե. Լալայեան, Զառախք, հ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 310:

24 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 230:

երրորդը՝ Յայսմաուրբ, գրվել է 1442 թ.²⁵: Պահպանված համառոտ հիշարակարանները հիմք են ապառնում ենթադրելու, որ սրանցից առաջին երկուսը պարկանում են երկրորդ թումնա կրոնավոր գրիչին, իսկ երրորդը՝ Դանիել գրիչի եղբայր թումնա կրոնավորին:

Գրիգոր քահանա

Խաչիկի որդի Գրիգոր գրիչը (թումայի եղբայրը) 1444 թ. ընդօրինակել է Յայսմաուրբ (ՄՄ, ձեռ. թիվ 3806), նույն թվականին՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4846), 1449 թ.՝ Անտարան (ՄՄ, ձեռ. թիվ 4928), 1452 թ.՝ Անտարան (ՄՄ, ձեռ. թիվ 4830), 1454 թ.՝ Անտարան (ՄՄ, ձեռ. թիվ 9274)²⁶, 1454 թ.՝ Անտարան²⁷: 1461 թ. Գրիգոր քահանան գրում է Ճառնարի (ձեռագիրը կորած է)²⁸:

Գրիգոր քահանայի որդին է թումնա քահանան, որը նախապես օգնում էր հորը՝ ձեռագրերի թուղթը կոկելով: Մեզ են հասել նաև երեք ձեռագրեր՝ գրված նրանց երկուսի կողմից, այդ ժամանակ թումնա արդեն քահանա է. 1461 թ., Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 7846), 1462 թ., Անտարան (ՄՄ, ձեռ. թիվ 7632), 1463 թ., Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 2788)²⁹:

Թումնա քահանա (որդի Գրիգորի)

Թումնա քահանան, ինչպես նշեցինք, իր հորից՝ Գրիգոր քահանայից է սովորել գրչության արվեստը և նրա հետ գրել առաջին ձեռագրերը: Թումնա 1499 թ. իր հիշարակարանում նշում է նաև իր հորեղբորը՝ թումնա կրոնավորին և ասում, որ նա հռչակավոր քարտուղար էր Կոնոնով մականունով:

1463 թ. թումնան ընդօրինակում է Մաշտոց (ձեռագիրը մեզ չի հասել)³⁰, 1471 թ.՝ Անտարան, որը մանրանկարում է Կարապետ քահանան՝ գրիչի համշիրակ (այսինքն՝ կաթնակից) եղբայրը (ՄՄ, ձեռ. թիվ 2632), 1476 թ.՝ ևս մի Անտարան (ՄՄ, ձեռ. թիվ 5333), 1484 թ.՝ Գանձարան (ՄՄ, ձեռ. թիվ 4767), 1494 թ.՝ Անտարան (Նոր Զուղա, ձեռ. թիվ 403), 1499 թ.՝ Մաշտոց, որը նկարագարում է Նովսեփ ծաղկողը (ՄՄ, ձեռ. 6326)³¹:

Թումնա Մինասենց

Գրիչ և մանրանկարիչ թումնա կրոնավորը ինչպես գրչության արվեստի, նույնպես և մանրանկարչության հիանալի գիտնական է: Նրա ծնողներն են Միմեոնը և Արդունը, իր երախտավոր ուսուցիչն է քեռին՝ թումնա միայնակյացը: Գրիչը հիշում է նաև իր հորեղբորը՝ Վարդանին և նրա որդուն՝ Մկրտիչ կրոնավորին: Վերջինս 1425 թ. նկարագարում է թումնայի ընդօրինակած ձեռագիրը, իսկ 1428 թ. իր ձեռագրում թումնան հիշում է նրան ննջեցյալների շարքում: Թումնա Մինասենցը եղել է բանուսույց վարդապետ. նրա աշակերտներից է քրոջ որդին՝ Նայրապետ սարկավագը (տե՛ս Նայրապետ գրիչ): 1445 թ. իր Գանձարանում թումնան նշում է մեկ այլ աշակերտի ևս՝ Ներսես սարկավագին, որը կոկել էր ձեռագրի թուղթը (տե՛ս Ներսես գրիչ):

25 Տե՛ս անդ, էջ 538-539:

26 Տե՛ս անդ, էջ 569-572, 634: «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Եր., 1958, էջ 20-22, 45:

27 Տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Բուլգարիա», կազմ.՝ Ներսես Գասապեան, խմբ.՝ Օ. Եզանեան, թիվ 5:

28 **Ղ. Փիրդալմեան**, Նօտարք հայոց, էջ 199-200, թիվ 237, նաև՝ «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 163:

29 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 161-162, 184-186, 198-199:

30 Տե՛ս **Ղ. Փիրդալմեան**, Նօտարք հայոց, էջ 216, թիվ 249:

31 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 324-325, 406-407: «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Եր., 1967, էջ 64, 202, 284-285:

1420 թ. Թումա Մինասենցն ընդօրինակում է Աւերարան (ՄՄ, ձեռ. թիվ 5514), 1425 թ.՝ մեկ այլ Աւերարան, որը ծաղկում է նրա հորեղբորորդին՝ Մկրտիչ կրոնավորը (ՄՄ, ձեռ. թիվ 5542): Թումա Մինասենցը 1428 թ. գրում է մանրանկարում է հերթական Աւերարանը, որի համար թուղթ պատրաստելիս օգնում է նրա քրոջ որդին՝ Նայրապետ սարկավազը (ՄՄ, ձեռ. թիվ 6324): 1444 թ. Թուման արդեն իսկ վերը հիշված իր աշակերտ Նայրապետ արեղայի հետ միասին ընդօրինակում է մի Աւերարան, ապա՝ ինքը ծաղկում է կազմում է այն. ի դեպ, նկարում է նաև սրացողներին՝ եղբայրներ Ծերուն արեղային և Թումային (ՄՄ, ձեռ. թիվ 4829): 1445 թ. նա գրում, նկարագրում է կազմում է մի Գանձարան (ՄՄ, ձեռ. թիվ 5521)³², նույն թվականին՝ Մաշտոց (ձեռագիրը կորած է)³³: 1447 թ. Մովսես Ուրանցու խնդրանքով գրում, նկարագրում է կազմում է Աւերարան (ՄՄ, ձեռ. թիվ 4436), հիշարակարանում նշելով, որ ինքը ձեռագրում է փկարացած էր, սակայն, չջանկանալով մերժել ձեռագրի պատվիրապետին՝ Մովսես քահանային, ընդօրինակում է մատյանը. «Եւ արդ, ես՝ ...Մինասենց Թումայա, անուամբ և եթ արեղայ՝ եղկելի ոգիս, փրեսի զփափազ և զսէր Մովսես քահանային, զոր ունէր առ հոգևորսն, և իմով ձեռացեալ անձամբս և փկարացեալ մարմնովս յանձն առի զըծագրել զսա իմով իսկ մեղսամած մատյանքս, և ամենակարող զարութեամբն Աստուծոյ կատարեցի զաստուածախօս կրթակս զայս յաստուածապահ կրղզիս Աղթամար, ընդ հովանեա զերահօջակ և երկնանման Սուրբ Խաչ փաճարիս, և Սուրբ Փրկչիս, և Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Սարգիս Զարավարիս, ի հայրապետութեան փրեսոն Զաքարիայի, և ի թվականութեան Նայկազեան փոմարիս ի յութհարիւր և ինքսուն և վեց (1447)»³⁴: 1452 թ. գրիչն ընդօրինակում է Գրիգոր Նարեկացու «Մարեան ողբերգութեան» աղոթագիրքը (ձեռագիրը կորած է)³⁵: 1455 թ. Թուման սկսում է մի Ճաշոց ծիսամատյանի ընդօրինակությունը, սակայն վախճանվում է՝ ձեռագիրը ավարտին չհասցրած: Այն շարունակում է Նայրապետ արեղան:

Նայրապետ արեղա

Նայրապետ արեղան Թումա Մինասենց գրչի և մանրանկարչի քրոջ որդին է և աշակերտը: Նրա ծնողները Խաչատուրն ու Ոսկերիկինն են, եղբայրը՝ Նովհաննեսը: Նովհաննեսի որդի Կարապետ քահանան Նայրապետ գրչի աշակերտն է: Նա նաև մանրանկարիչ է և ծաղկում է Նայրապետի գրչագրերը:

Առաջին ձեռագիրը, որը մեզ հասել է նրանից, գրել է իր ուսուցիչ Թումա Մինասենցի հետ 1444 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 4829): 1446 թ. Թումա Մինասենցի պատվերով Նայրապետը Աւերարան է ընդօրինակում (ձեռագիրը կորած է)³⁶: 1455 թ. նա ավարտին է հասցնում իր ուսուցչի սկսած Ճաշոցը (ՄՄ, ձեռ. թիվ 9216), 1459 թ. ընդօրինակում է Աւերարան, որը ծաղկում է իր եղբորորդին՝ Մուրատ սարկավազը (հետագայում՝ Կարապետ քահանա) (ՄՄ, ձեռ. թիվ 5417), նույն թվականին մեկ Աւերարան էս (ձեռագիրը կորած է)³⁷, 1467 թ.՝ Ճառնարի (ձեռագիրը կորած է)³⁸, 1470 թ.՝ հերթական Աւերարանը (ՄՄ, ձեռ. թիվ 8928),

32 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 238-239, 326-327, 374-378, 562-566, 582-584:

33 Գ. Փիրղալեմնան, Նօփարք հայոց, էջ 136-139, թիւ 149: Սույն ձեռագիրը գրվել է Վասպուրականի Կապուր Կողան բերդի մոտ գրվող Ս. Նակր վանքի համար, ուր էլ փրված է վանքի վերանորոգման պատմությունը:

34 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 608-609:

35 Գ. Փիրղալեմնան, Նօփարք հայոց, էջ 170, թիւ 189:

36 Տեն «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», թիւ 168:

37 Գ. Փիրղալեմնան, Նօփարք հայոց, էջ 193, թիւ 230:

38 Տեն անդ, էջ 231, թիւ 275: Ըստ գրչի հիշարակարանի այս ձեռագիրը գրվել է մասամբ Ս. Էջմիածնում,

1471 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4775), 1476 թ.՝ Ճառընդիր (ձեռագիրը կորած է)³⁹, 1478 թ.՝ Անկարան (Նոր Զուղա, ձեռ. թիվ 527)⁴⁰, 1480 թ.՝ Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 5581), 1484 թ.՝ Անկարան (ձեռագիրը կորած է), 1490 թ.՝ Անկարան (ՄՄ, ձեռ. թիվ 7585)⁴¹: Նայրապետ արեղայի ձեռագրերի մեծ մասը ծաղկել է նրա եղբորորդին՝ Կարապետ քահանան (1470, 1471, 1478, 1490 թթ. գրվածները): 1492 թ. Նայրապետ արեղան Կարապետ քահանայի հետ ընդօրինակում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 4201): Կարապետ քահանան նաև ծաղկում է կազմում է այս ձեռագիրը:

Կարապետ քահանա

Կարապետ ծաղկողի (մինչ քահանայություն՝ Մուրապ սարկավագ) ծնողներն են Նահանեսն ու Շարմելիքը, հորեղբայրը՝ Նայրապետ արեղան: Նրա ուսուցիչը Մինասն է, ինչպես ինքը նշում է Նակոբ կորնավորի՝ 1460 թ. ընդօրինակած է իր ծաղկած ձեռագրում (ՄՄ, 7627): Կարապետը ծաղկեցրել է Նայրապետ արեղայից մեզ հասած գրեթե բոլոր ձեռագրերը, Ներսես և Նակոբ կորնավորների ընդօրինակած գրչագրերից: Մեզ հասել է Մաշտոց, որը նա 1492 թ. ընդօրինակել է Նայրապետ արեղայի հետ, սակայն ծաղկել է կազմել է (ՄՄ, ձեռ. թիվ 4201): 1496 թ Կարապետը գրում է ծաղկում է ևս մեկ Մաշտոց (ձեռագիրը կորած է)⁴², 1498 թ.՝ Անկարան (ՄՄ, ձեռ. 4955)⁴³, Մաշտոց (ՄՄ, ձեռ. 5181)⁴⁴, 1501 թ.՝ Մայր Մաշտոց (ձեռագիրը կորած է)⁴⁵:

Ներսես գրիչ

Ներսես գրիչի ծնողներն են Գուռջիրենկն ու Էմնա խաթունը, ուսուցիչը՝ Թումա Մինասենցը: Ներսեսի եղբայրը Սյրեվանոս կորնավորն է, որը հետագայում դառնում է Աղթամարի Կաթողիկոս (1465 – 1489):

1449 թ. Ներսես գրիչն ընդօրինակում է Անկարան (ձեռագիրը կորած է)⁴⁶: Ըստ մեր ունեցած տվյալների՝ 1457 թ. Ներսես արեղան ևս երկու Անկարան է ընդօրինակել. սակայն դրանք մեզ չեն հասել⁴⁷: 1458 թ.՝ գրել է Անկարան (ՄՄ, ձեռ. թիվ 3848), որում նրան օգնում է Թումա քահանան, 1460 թ.՝ Անկարանը (ՄՄ, ձեռ. թիվ 5544)⁴⁸, 1461 թ.՝ Անկարան (ձեռագիրը կորած է)⁴⁹: 1470 թ. նա արդեն եպիսկոպոս է և ընդօրինակում է Մաշտոց, որը ծաղկում է Կարապետ քահանան (ՄՄ, ձեռ. թիվ 5702): 1475 թ. Ներսես գրիչը, արդեն արքեպիսկոպոս, ընդօրինակում է Անկարան, որի հիշարակարանում նշում է ծնողներին, նաև եղբորը՝ Սյրեվանոսին, որն արդեն Աղթամարի Կաթողիկոսն էր (Նոր Զուղա, ձեռ.

մասամբ՝ Աղթամարում:

39 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 407:

40 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 431:

41 1455, 1459, 1470, 1471, 1480 թթ. գրված ձեռագրերի հիշարակարանները տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 57-58, 127-128, 301-304, 312-313, 445-446: 1484 և 1490 թթ. ձեռագրերինը՝ «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 58, 153-154:

42 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ, 187, 230-231:

43 Տե՛ս անդ, էջ 265-266: Այս ձեռագրի գրչության վայրը Աղթամարը չէ, սակայն ծաղկողը մեզ հայտնի Կարապետ Աղթամարացին է:

44 Տե՛ս անդ, էջ 267-268:

45 Տե՛ս **Ղ. Փիրղալենյան**, Նշխարք պարմութեան հայոց, ՄՄ, ձեռ. թի 6332, էջ 222, թի 386:

46 **Ղ. Փիրղալենյան**, Նօտարք հայոց, էջ 159-160, թի 171:

47 Տե՛ս **Սահակ Մուրապետան**, **Ն. Մարտիրոսեան**, Յուզակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967, հմր. 26: **Ղ. Փիրղալենյան**, Նօտարք հայոց, էջ 185, թի 218:

48 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 102-104, 142-143:

49 Տե՛ս «Յուզակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», թի 184:

թիվ 409)⁵⁰: 1489 թ. Ներսեսն ընդօրինակում է Յայսմաուրբ (ՄՄ, ձեռ. թիվ 4728). այս ձեռագրում թեև գրչության վայրը, նշված չէ, սակայն պարզ է, որ Աղթամարի վանքն է: Ներսեսը դառն կսկիծով գրում է, որ այդ թվականին վախճանվեց իր եղբայրն ու Աղթամարի Կաթողիկոսը՝ Սյրեփաննոսը⁵¹:

Նակոր կրոնավոր

Նակոր կրոնավորի ծնողներն են Նովսեփը և Փաշամելիքը, ուսուցիչներն են՝ Նայրապետ կրոնավորը (հավանաբար մեզ արդեն հայտնի Նայրապետ գրիչը), Նովհաննես կրոնավորը և Կեր Թուման:

1458 թ. Նակոր գրիչն ընդօրինակում է Մաշտոց (ՄՄ, ձեռ. թիվ 959): 1460 թ.՝ Անկարան, որը ծաղկում է Մուրադ սարկավազը (ինձ՝ Կարապետ քահանա ծաղկողը), կազմում՝ Ներսես սարկավազը (ՄՄ, ձեռ. թիվ 7627): 1484 թ. ընդօրինակում է Անկարան, որը ծաղկում է Կարապետը (ՄՄ, ձեռ. թիվ 9233): Այս ձեռագրի օրինակը նրան շնորհում է իր վարպետ Նովհաննես կրոնավորը: 1493 թ. գրիչն ընդօրինակում է Անկարան, որը ծաղկում է Պարսամբ⁵² (ՄՄ, ձեռ. թիվ 4937)⁵³:

Մապթեոս արեղա

Մապթեոս գրիչի ծնողներն են Կարապետը և Խոնձա խաթունը, նրա հորեղբայրը Նովհաննես եպիսկոպոսն է, ուսուցիչը՝ Նակոր կրոնավորը (հավանաբար մեզ հայտնի Նակոր գրիչը): Մապթեոս գրիչից մեզ է հասել երեք Անկարան և մեկ Շարակնոց: Շարակնոցը գրվել է 1491 թ. (Երուսաղեմ, ձեռ. թիվ 1741): Երեք Անկարանների ծաղկողն էլ Նովսեփ կրոնավորն է, երկուսի կազմողը՝ Աբրահամ Արծկեցին: Այս ձեռագրերից առաջինը գրվել է 1496 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 10956), մյուս երկուսը՝ 1497 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 158, 3534)⁵⁴:

Թումա կրոնավոր

Ըստ մեր ունեցած փվյալների՝ 1495 թ. Աղթամարում Թումա անունով կրոնավորը ընդօրինակում է Անկարան: Նիշարակարանում նա նշում է, որ իր ուսուցիչը Ներսես արքեպիսկոպոսն է՝ Սյրեփանոս Կաթողիկոսի եղբայրը: Ցավոք, նրա գրչագիրը մեզ չի հասել⁵⁵:

Գրիգոր արեղա

Գրիգոր արեղայի ծնողներն են Սեթը և Խալ խաթունը (Սարգիս և Խալիմ), ուսուցիչն է Թումա քահանան (թերևս Գրիգոր գրչի որդի Թումա քահանա գրիչը): Գրիգոր արեղայից մեզ է հասել երկու Անկարան, գրված 1470 և 1497 թթ. (ՄՄ, ձեռ. թիվ 4970, Օբսֆորդ, 9)⁵⁶, իսկ 1479 թ. գրված Անկարանը համարվում է կորած⁵⁷:

Նովհաննես գրիչ

50 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 385-386:

51 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 133-135:

52 Պարսամի 1491թ. նկարագրողում մեկ Անկարան ևս ունենք, որում, սակայն, գրչության վայրը և գրիչը նշված չեն՝ ՄՄ, ձեռ. թիվ 9660, տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 184:

53 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 101-102, 143-145: «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, 63-64, 191-192:

54 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 176-177, 243-245:

55 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 211: Գ. Սրուանձվեանց, «Թորոս Աղբար», հ. Բ., էջ 446-447:

56 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 304-305: «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, 1967, էջ 245-256:

57 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 439: Ս. Նայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գառառ, Էջմիածին, 1894, էջ 362:

Նովհաննես արեղան 1484 թ. ընդօրինակում է Շարակնոց (ՄՄ, ձեռ. թիվ 1585), 1485 թ.՝ ևս մեկ Շարակնոց (ձեռագիրը կորած է), 1489 թ.՝ Գրիգոր Նարեկացու «Մարեան ողբերգութեան» աղոթագիրքը (ՄՄ, ձեռ. թիվ 5177)⁵⁸:

Մկրտիչ գրիչ: Մկրտիչ գրիչի ծնողներն են Թուման և Շահրաթը: Այս գրիչից մեզ են հասել երկու ձեռագրեր. Մաշտոց՝ ընդօրինակված 1460 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5470) և Գանձարան՝ 1466 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5376)⁵⁹:

Սյրեփաննոս արեղա: Սյրեփաննոսի ծնողներն են Մկրտիչն ու Գոհարմելեքը, նա հիշում է նաև իր եղբայրներին և քրոջը: Այս գրիչից մեզ հասել է երեք Անեպարան՝ գրված 1452 թ. (Նոր Զուղա, ձեռ. թիվ 55), 1453 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 5513)⁶⁰, երրորդը կորած է և հայրնի չէ նաև գրչության թվականը⁶¹: 1447 թ. Աղթամարում Ճաշոց է ընդօրինակել Սյրեփաննոս արեղան: Ձեռագիրը կորած է, սակայն կարող ենք ենթադրել, որ գրիչը նույն Սյրեփաննոսն է⁶²:

Մի շարք գրիչներից մեզ են հասել մեկական մապյաններ, պահպանվել են նաև այլ մասամբ Աղթամարում գրված ձեռագրեր:

1467 թ. Աղթամարում **Կիրակոս Ջոշկանցը** ավարտին է հասցնում մի Ճառընդհարի ընդօրինակություն, որն սկսել էր Բաղեշում⁶³: Կիրակոս գրիչը որպես իր ուսուցիչներ նշում է Նովհաննես Մանկասարենցին և Կրեթ Թումային: 1492 թ. **անանուն գրիչը** Թումա Մինասենցի Գանձարանից ընդօրինակություն է կապարում (ՄՄ, ձեռ. թիվ 4782): Ձեռագրում, թեև գրչության վայրը նշված չէ, սակայն Թումա Մինասենցի հիշարակարանից գիտենք, որ նա իր Գանձարանն ընդօրինակել էր Աղթամարի Ս. Խաչի միաբանների համար (ՄՄ, ձեռ. թիվ 5521): Ուստի և կարող ենք ենթադրել, որ անանուն գրիչի ընդօրինակությունը ևս Աղթամարում է եղել⁶⁴: 1494 թ. Աղթամարում գրվել է Անեպարան: Ձեռագիրը մեզ չի հասել, պահպանված հիշարակարանը չի փայլա գրիչի անունը, այլ միայն՝ գրչության վայրը, թիվը և սրացողի անունը՝ Նովհաննես⁶⁵:

ԺԶ-ԺԹ դդ. Աղթամարում գրված քիչ ձեռագրեր են հասել՝ մեզ:

Նովսեփ գրիչը ընդօրինակել է Ժողովածու 1503 թվականին (ՄՄ, ձեռ. թիվ 2033), և երեք Շարակնոց. առաջինը՝ 1504 թ., մյուսները՝ 1512 թթ. (ՄՄ, ձեռ. թիվ 10741, Վենեփիկ ձեռ. թիվ 770, 1356): 1511 թ. **Նովհաննես քահանան** ընդօրինակում է Անեպարան (ՄՄ, ձեռ. թիվ 5226), 1526 թ. **Նակոր գրիչը**՝ Աղուեսգիրք (Մաղնիսի, ձեռ. թիվ 97), 1560 թ. **Գրիգոր քահանան**՝ Անեպարան (ՄՄ, ձեռ. թիվ 4848), 1592 թ. **Մելքենթ գրիչը**՝ Սաղմոսարան (ՄՄ, ձեռ. թիվ 5986):

1691 թ. **Թումա քահանան** Անեպարան է ընդօրինակել (ՄՄ, ձեռ. թիվ 8888), 1666 թ. **Նայրապետ գրիչը**՝ Աստուածաշունչ: Ներագայում այս ձեռագիրը ԺԷ դարում գրված անթվական մեկ Աստուածաշունչի հետ դրվել է ընդհանուր կազմի մեջ (ՄՄ, ձեռ. թիվ 6753): Այս դարաշրջանում **Կրեթ Սուրբաս գրիչը** գրել է Ժողովածու (ՄՄ, ձեռ. թիվ 10065): ԺԷ

58 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 74, 135-136:

59 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 145, 247-248:

60 Տե՛ս անդ, էջ 23, 37:

61 Տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», թիւ 228:

62 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Ա, էջ 609:

63 «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Բ, էջ 256-257: **Ղ. Փիրղալմենան**, Նօւրաթ հայոց, էջ 229-230, թիւ 273:

64 Տե՛ս «Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ», ԺԵ դար, հ. Գ, էջ 185:

65 Տե՛ս անդ, էջ 202: Մ. Բարխուդարյան, Արցախ, 1895, էջ 112:

դարին վերագրվող Անկարան է պահպանվել՝ գրչության թվականն ու գրիչն անհայր (ՄՄ, ձեռ. թիվ 5578):

ԺԸ դարից միայն մեկ ձեռագիր է հասել՝ Մաշտոց ձեռնադրության, գրված 1741 թ. (ՄՄ, ձեռ. թիվ 6011):

Վեց ձեռագիր էլ ունենք ԺԹ դարից: 1824 թ. Նովհաննես Ե Կաթողիկոս Շապուխցու (1823 – 1843) պարվերով **Ղազար Խալիֆյանցը** գրում է Աղթամարի Աթոռի պատմությունը (ՄՄ, ձեռ. թիվ 5467): Նաջորդը **Եզնիկ Ներկարարյան Մոկացու** հեղինակած Քարոզգիրքն է՝ 1887-1893 թթ.: Այս ձեռագիրը ծաղկել է Գետրգ վարդապետ Եղեսայանը, պարվիրել՝ Նովսեփ վարդապետ Թովմասյանը (ՄՄ, ձեռ. թիվ 5264): 1889 թ. **Մապրթոս վարդապետ Խիզանցին** ընդօրինակում է «Բուրասարան հոգևոր» խորագրով Քարոզգիրք՝ նույնպես Նովսեփ վարդապետի համար (ՄՄ, ձեռ. թիվ 5270): Մխիթարյան միաբանության անդամ **Ներսես վարդապետ Սարգիսյանը** Աղթամարում ընդօրինակում է երկու ձեռագիր՝ Յովհան Ոսկերեան՝ 1848/9 թթ. (Վենետիկ, ձեռ. թիվ 652), «Նաւարումն բանից նախնեաց»՝ 1849 թ. (Վենետիկ, ձեռ. թիվ 678). այս երկու ձեռագրերը մասամբ գրվել են Աղթամարի մոտակա գրչության կենտրոններում՝ Վան, Լիմ, Կրոց, Վարագ: Աղթամարի վերջին՝ **Խաչատուր Բ Շիրոյան** Կաթողիկոսի պարվերով ընդօրինակվում են երկու Ձեռնադրության Մաշտոցներ. գրիչներն անհայր (ՄՄ, ձեռ. թիվ 5534, 5564): Տռչակավոր այս վանքում հայության կյանքը կանգ առավ 1915 եղեռնալից թվականին:

Անփոփելի կարող ենք ասել՝ Աղթամարի Ս. Խաչ վանքի գրչության կենտրոնը թողել է ծանրակշիռ ձեռագրական ժառանգություն: Նարեկապետ ԺԴ-ԺԵ դարերում ձեռագրասարեղծման գործն Աղթամարում շարունակական մի շղթա է, ուր գրչության արվեստը փոխանցվում է սերնդեսերունդ, վարդապետից՝ աշակերտին, հանդես են գալիս նաև գրիչների փոհմեր:

Ակնարկում ներկայացրել ենք Աղթամարի վանքից մեզ հասած 101 ձեռագիր, որոնցից 89-ը գրվում են Մաշտոցի անվան Մաբենադարանում, 12-ը՝ այլ հավաքածուներում: Նշել ենք նաև այժմ կորած, սակայն փարբեր աղբյուրներից հայտնի աղթամարյան 34 ձեռագիր (կից փալիս ենք ձեռագրերի ամբողջական ցուցակը): Չի բացառվում, որ կան նաև Աղթամարում գրված այլ մատյաններ, որոնք կամ գրվել են հիշարակարանից, կամ հիշարակարաններում չի նշվում գրչության վայրը: Սակայն այն ինչ հասել է մեզ, արդեն իսկ մի մեծ մշակութային ժառանգություն է և անհերքելի ապացույցն է այն բանի, որ այսօր հայությունից ամայացած Աղթամարում ողջ միջնադարում կերտվել է հայկական և միայն հայկական մշակույթ: Ավելացնենք, որ Աղթամարը, ինչպես նաև Վանա լճի մյուս կղզիները՝ Լիմ և Կրոց անապատներով եղել են նաև ձեռագրապահպանման խոշոր կենտրոններ և չնայած Առաջին աշխարհամարտի փարիներին եղած ձեռագրական մեծ կորուստներին, այս կենտրոններից մի բանի հարյուր ձեռագրեր են փրկվել ու փրկափոխվել Սուրբ Էջմիածին, իսկ այնպեղից՝ Երեսնի Մաշտոցի անվան Մաբենադարան:

ԱՂԹԱՄԱՐԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅՈՒՑԱԿ

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՈՒՄՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՐԱՆ⁶⁶

1. Ձև. թիւ 158, Անւարարան, 1497 թ., գրիչ՝ Մապրթնու կրօնատր, ծաղկող՝ Յովսէփ կրօնատր, սրացող՝ Թումայ, (թուղթ, 347 թերթ, 17.8x13)
2. Ձև. թիւ 207 (նաև՝ Վարագ), Ասպուածաշունչ, 1421-1422 թթ., գրիչ՝ Թումայ արեղայ, կազմող՝ Թումայ արեղայ (գրիչը), սրացողը՝ Յովհաննէս վարդապետ, Սաղաթէլ արեղայ, (թուղթ, 560 թերթ, 28x18.3)
3. Ձև. թիւ 208, Մասունք Նոր Կրակարանի, 1277 թ., գրիչ՝ Սիմէոն, սրացող՝ Խաչատր քահանայ, (թուղթ, 222 թերթ, 24.7x17)
4. Ձև. թիւ 959, Մաշտոց, 1458 թ., գրիչ՝ Յակոբ, սրացող՝ Աւերիս փանուրէր, (թուղթ, 310 թերթ, 27x18)
5. Ձև. թիւ 976, Ժողովածոյ, 1316 թ., գրիչ՝ Դանիէլ եպիսկոպոս, սրացող՝ Տիրացու կրօնատր, (թուղթ, 292 թերթ, 33.5x23)
6. Ձև. թիւ 994, Ճառընտիր, 1409 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, սրացող՝ Յովաննէս փանուրէր, (թուղթ, 484 թերթ, 31.5x22)
7. Ձև. թիւ 1585, Շարակնոց, 1484 թ., գրիչ՝ Յովհաննէս, սրացող՝ գրիչը, (մագաղաթ (թուղթ՝ 12 թերթ), 224 թերթ, 12.7x8.6)
8. Ձև. թիւ 2001 (ԺԵ դ. այլ ձեռագրի հետ միասին), Ժողովածոյ, 1373 թ., գրիչը՝ Կարապետ քահանայ, Թումայ արեղայ, սրացող՝ Սրեփանոս քահանայ, (թուղթ, ընդհանուրը՝ 247 թերթ, 14.5x11)
9. Ձև. թիւ 2033, Ժողովածոյ, 1503 թ., գրիչ՝ Յովսէփ, սրացողը՝ Մկրտիչ քահանայ, Յովաննէս քահանայ, Փոխան սարկաւազ, (մագաղաթ, 286 թերթ, 9.2x6.5)
10. Ձև. թիւ 2632, Անւարարան, 1471 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, ծաղկող՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Մարտիրոս Բառեցի, (թուղթ, 322 թերթ, 27x18.5)
11. Ձև. թիւ 2788, Մաշտոց, 1463 թ., գրիչը՝ Գրիգոր քահանայ և որդին՝ Թումայ քահանայ, սրացող՝ Մարտիրոս, (թուղթ, 376 թերթ, 27x18.5)
12. Ձև. թիւ 2843, Անւարարան, 1354 թ., գրիչ՝ Կարապետ կրօնատր, ծաղկող՝ Զարարիս, կազմող՝ Ներսէս, սրացող՝ Անանիս փանուրէր, (թուղթ, 318 թերթ, 23.2x15.5)
13. Ձև. թիւ 3534, Անւարարան, 1497 թ., գրիչ՝ Մապրթնու արեղայ, ծաղկող՝ Յովսէփ, կազմող՝ Արրահամ Արծկեցի, սրացող՝ Բէկի, (թուղթ, 352 թերթ, 18x13)
14. Ձև. թիւ 3806, Յայսմաուրբ, 1444 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սրացող՝ Սրեփանոս քահանայ, (թուղթ, 702 թերթ, 36x24.5)
15. Ձև. թիւ 3848, Անւարարան, 1458 թ., գրիչ՝ Ներսէս արեղայ, սրացողը՝ Ասպուածա-

⁶⁶ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մաքենաղարանի, հ. Ա, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965, հ. Բ, կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1970, հ. Գ, կազմ. Ա. Մալխասյան, Երևան, 2007:

- տուր, Սյրեփաննոս քահանայք, (թուղթ, 270 թերթ, 20x15)
16. Ձեռ. թիւ 4201, Մաշտոց, 1492 թ., գրիչք՝ Նայրապետ արեղայ, Կարապետ քահանայ, ծաղկող եւ կազմող՝ Կարապետ քահանայ (գրիչք), սպացողք՝ Պաուղոս հիւսն, Միրան մահարեսի, (թուղթ, 367 թերթ, 27x18)
 17. Ձեռ. թիւ 4436, Անկարան, 1447 թ., գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Թումայ Մինասենց, սպացող՝ Մովսէս Ուրանցի, (թուղթ, 141 թերթ, 27x18)
 18. Ձեռ. թիւ 4674, Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն Կաթողիկեայց, 1333 թ., գրիչ՝ Կարապետ կրօնատու, սպացող՝ Յակոբ քանուպետ, (թուղթ, 513 թերթ, 47x32)
 19. Ձեռ. թիւ 4687, Ճաշոց, 1312 թ. (Ա), 1371 թ. (Բ), գրիչ՝ Դանիէլ կրօնատու (Ա), Զաքարիա կրօնատու (Բ), ծաղկող՝ Դանիէլ (գրիչք), սպացող՝ Դանիէլ գրիչ եւ բոյրը՝ Մարիանէ (Ա), Զաքարիա գրիչ (Բ), (թուղթ, 592 թերթ, 42.5x30.5)
 20. Ձեռ. թիւ 4695, Ճաշոց, 1421 թ., գրիչ՝ Թումայ կրօնատու, սպացող՝ Յովհաննէս կրօնատու, (թուղթ, 468 թերթ, 41x30)
 21. Ձեռ. թիւ 4728, Յայամատուրք, 1489 թ., գրիչ՝ Ներսէս եպիսկոպոս, սպացող՝ Վարդան, (թուղթ, 513 թերթ, 36x26)
 22. Ձեռ. թիւ 4738, Ճաշոց, 1319 թ., գրիչ՝ Կարապետ կրօնատու, սպացողք՝ րէր Սյրեփաննոս, Կարապետ կրօնատու, (թուղթ, 264 թերթ, 32x23)
 23. Ձեռ. թիւ 4767, Գանձարան, 1484 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, սպացող՝ Սարգիս, Եղիսարեղ, (թուղթ, 314 թերթ, 27x17.5)
 24. Ձեռ. թիւ 4775, Մաշտոց, 1471 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, ծաղկող՝ Կարապետ քահանայ, կազմողք՝ հիւսն Թումայ, Անկարիս, սպացող՝ գրիչք, (թուղթ, 360 թերթ, 27x18)
 25. Ձեռ. թիւ 4782, Գանձարան, 1492 թ., սպացող՝ Գրիգոր, (թուղթ, 329 թերթ, 24.5 x 17)
 26. Ձեռ. թիւ 4787, Մաշտոց, 1404 թ., Դանիէլ, սպացող՝ Կիրակոս քահանայ, (թուղթ, 220 թերթ, 24x16)
 27. Ձեռ. թիւ 4801, Մաշտոց, 1312 թ., գրիչ՝ Դանիէլ կրօնատու, սպացող՝ Գրիգոր միայնակեաց, (թուղթ, 259 թերթ, 33x24)
 28. Ձեռ. թիւ 4829, Անկարան, 1444 թ., գրիչք՝ Նայրապետ արեղայ, Թումայ Մինասենց, ծաղկող եւ կազմող՝ Թումայ Մինասենց (գրիչք), սպացողք՝ Թումայ Գաւաշեցի, Ծերուն արեղայ (եղբարք), (թուղթ, 304 թերթ, 27.5x17.5)
 29. Ձեռ. թիւ 4830, Անկարան, 1452 թ., Գրիգոր քահանայ, սպացող՝ Սուլնամելէք, (թուղթ, 318 թերթ, 27x18.5)
 30. Ձեռ. թիւ 4846, Մաշտոց, 1444 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սպացող՝ Քարին, (թուղթ, 262 թերթ, 26x18)
 31. Ձեռ. թիւ 4848, Անկարան, 1560 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սպացող՝ Կարապետ քահանայ, (թուղթ, 328 թերթ, 27x17)
 32. Ձեռ. թիւ 4870, Ճաշոց, 1385 թ., Զաքարիա կրօնատու, սպացող՝ Թումայ եպիսկո-

- պոս, (թուղթ, 476 թերթ, 34x25)
33. Ձև. թիւ 4881, Կիրեղ Երուսաղէմացի, Կոչումն ընծայութեան, 1307 թ., գրիչ՝ Դանիէլ կրօնաւոր, սրացող՝ Մխիթար կրօնաւոր, (թուղթ, 275 թերթ, 34x25)
34. Ձև. թիւ 4890, Ճաշոց, 1313 թ., Դանիէլ կրօնաւոր, սրացողը՝ Լորարք Թովմայ և Առաքել, (թուղթ, 290 թերթ, 33x23.5)
35. Ձև. թիւ 4908, Անւարան, 1393 թ., Զաքարիա կրօնաւոր, կազմող՝ Եղիա Արգիլանցի, սրացող՝ Թաղէոս կրօնաւոր, (թուղթ, 288 թերթ, 27x18)
36. Ձև. թիւ 4915, Անւարան, 1355 թ., գրիչ՝ Գրիգոր, ծաղկող՝ Զաքարիա կրօնաւոր, Թումայ քահանայ, սրացող՝ Մուրաբ, (թուղթ, 288 թերթ, 27x18)
37. Ձև. թիւ 4923, Անւարան, 1403 թ., գրիչ՝ Դանիէլ և հայրը՝ Կարապետ քահանայ, ծաղկող՝ Զաքարիա կրօնաւոր, կազմող՝ Մկրտիչ Լալիսկոպոս, սրացող՝ Մխիթար քահանայ, (թուղթ, 264 թերթ, 27x18)
38. Ձև. թիւ 4928, Անւարան, 1439 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սրացողը՝ Թուրանդ, Յովհաննէս, (թուղթ, 307 թերթ, 27.5x18)
39. Ձև. թիւ 4937, Անւարան, 1493 թ., գրիչ՝ Յակոբ կրօնաւոր, ծաղկող՝ Պարսամ, սրացող՝ Խօջայ Միրիջան, (թուղթ, 324 թերթ, 26x17)
40. Ձև. թիւ 4941, Անւարան, 1390 թ., գրիչ և ծաղկող՝ Զաքարիա կրօնաւոր, կազմող՝ Սարգիս քահանայ, սրացող՝ Թաղազար, (թուղթ, 287 թերթ, 26x18)
41. Ձև. թիւ 4970, Անւարան, 1470 թ., Գրիգոր արեղայ, սրացող՝ Զուլալ Խաթուն, (թուղթ, 320 թերթ, 27.5x17.5)
42. Ձև. թիւ 5177, Գրիգոր Նարեկացի, Մաքեան ողբերգութեան, 1489 թ., գրիչ՝ Յոհաննէս արեղայ, (թուղթ, 178 թերթ, 18.5x12.5)
43. Ձև. թիւ 5181, Մաշտոց, 1489 թ., գրիչ և ծաղկող՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Ղրջախ Խաթուն, Մուրադ հիւսն, (թուղթ, 258 թերթ, 18 x 13)
44. Ձև. թիւ 5226, Անւարան, 1511 թ., գրիչ՝ Յոհաննէս քահանայ, սրացող՝ Յուսուֆ, (թուղթ, 227 թերթ, 16.5x11)
45. Ձև. թիւ 5264, Եզնիկ Ներկարարեան Մոկացի, Քարոզգիրք, 1887-1893 թ., գրիչ՝ հեղինակը, ծաղկող՝ Գևորգ վարդապետ Եղեսեան, սրացող՝ Յովսէփ վարդապետ Թովմասեան (թուղթ, 410 թերթ, 17.5x11)
46. Ձև. թիւ 5270, Բուրասպան հոգևոր, 1889 թ., գրիչ՝ Մաքթոս վարդապետ Խիզանցի, սրացող՝ Յովսէփ վարդապետ Պապականցի, (թուղթ, 359 թերթ, 17.8x11.7)
47. Ձև. թիւ 5333, Անւարան, 1476 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, սրացող՝ Գանուրըր Սաղաղա Ծիրենց, (թուղթ, 335 թերթ, 26x17.5)
48. Ձև. թիւ 5376, Գանձարան, 1466 թ., գրիչ՝ Մկրտիչ արեղայ, սրացող՝ Յովաննէս քահանայ, (թուղթ, 242 թերթ, 24x16)
49. Ձև. թիւ 5417, Անւարան, 1459 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, ծաղկող՝ Մուրաբ սարկաւազ, սրացող՝ Գիլբահար, (թուղթ, 301 թերթ, 26.5x18)

50. Ձեռ. թիւ 5467, Ղազար Խալիֆեանց, Պարմութիւն Աթոռոյն Աղթամարայ, 1824 թ., գրիչ՝ հեղինակը, սրացող՝ Յովհաննէս կաթողիկոս Շապախցի, (թուղթ, 55 թերթ, 23x16)
51. Ձեռ. թիւ 5470, Մաշտոց, 1460 թ., գրիչ՝ Մկրտիչ, սրացող՝ Վարդան փանուրէր, (թուղթ, 360 թերթ, 21.5x16)
52. Ձեռ. թիւ 5510, Անւարարան, 1399 թ., գրիչ՝ Զաքարիա կրօնատր, Դանիէլ սարկաւազ, ծաղկող՝ Թումայ քահանայ, սրացող՝ Դանիէլ փանուրէր, (թուղթ, 274 թերթ, 27x20.5)
53. Ձեռ. թիւ 5512, Անւարարան, 1418 թ., գրիչ՝ Թումայ կրօնատր, ծաղկող եւ կազմող՝ Դանիէլ քահանայ, սրացող՝ Խաչատուր, (թուղթ, 299 թերթ, 28x18)
54. Ձեռ. թիւ 5513, Անւարարան, 1453 թ., գրիչ՝ Սրեփաննոս, սրացող՝ Խաչատուր փանուրէր, (թուղթ, 289 թերթ, 28x18)
55. Ձեռ. թիւ 5514, Անւարարան, 1420 թ., գրիչ՝ Թումայ Մինասնց, ծաղկող՝ գրիչը, սրացող՝ Վարդան արեղայ, (թուղթ, 302 թերթ, 28.5x17)
56. Ձեռ. թիւ 5515, Անւարարան, 1441 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, ծաղկող՝ Թումայ Մինասնց, սրացող՝ Մկրտիչ փանուրէր, (թուղթ, 283 թերթ, 27.5x18)
57. Ձեռ. թիւ 5521, Գանձարան, 1445 թ., գրիչ եւ ծաղկող՝ Թումայ Մինասնց, սրացող՝ գրիչը, (թուղթ, 436 թերթ, 27.5x18)
58. Ձեռ. թիւ 5534, Մաշտոց ձեռնադրութեան, ԺԹ դ., սրացող՝ Խաչատուր կաթողիկոս Աղթամարայ, (թուղթ, 39 թերթ, 24x15.5)
59. Ձեռ. թիւ 5542, Անւարարան, 1425 թ., գրիչ՝ Թումայ Մինասնց, ծաղկող՝ Մկրտիչ կրօնատր, սրացող՝ Խաթուն, (թուղթ, 243 թերթ, 27.5x18)
60. Ձեռ. թիւ 5543, Անւարարան, 1436 թ., գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Դանիէլ քահանայ, սրացող՝ Յովհաննէս փանուրէր, (թուղթ, 291 թերթ, 27x18)
61. Ձեռ. թիւ 5544, Անւարարան, 1460 թ., գրիչ՝ Ներսէս արեղայ, սրացող՝ Թումայ եւ կիւնր՝ Նշխուն, (թուղթ, 321 թերթ, 27x18)
62. Ձեռ. թիւ 5558, Գրիգոր Նարեկացի, Մարեան ողբերգութեան, 1378 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Թումայ քահանայ, (թուղթ, 320 թերթ, 24x16)
63. Ձեռ. թիւ 5564, Մաշտոց ձեռնադրութեան, ԺԹ դ., սրացող՝ Խաչատուր կաթողիկոս Աղթամարայ, (թուղթ, 42 թերթ, 25x18)
64. Ձեռ. թիւ 5578, Անւարարան, ԺԷ դ., (մագաղաթ, 246 թերթ, 20x14)
65. Ձեռ. թիւ 5581, Մաշտոց, 1480 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, սրացող՝ Կարապետ փանուրէր, (թուղթ, 244 թերթ, 21x15.6)
66. Ձեռ. թիւ 5600, Ժողովածոյ, 1353-1354, գրիչ՝ Գրիգոր, սրացող՝ գրիչը, (թուղթ, 260 թերթ, 18x13)
67. Ձեռ. թիւ 5702, Մաշտոց, 1471 թ., գրիչ՝ Ներսէս եպիսկոպոս, ծաղկող՝ Կարապետ քահանայ, (թուղթ, 243 թերթ, 21.5x16.5)

68. Ձեռ. թիւ 5986, Սաղմոսարան, 1592 թ., գրիչ՝ Մէլքէսէթ, (թուղթ, 176 թերթ, 15x10)
69. Ձեռ. թիւ 6011, Մաշտոց ձեռնադրութեան, 1741 թ., (թուղթ, 52 թերթ, 16.5x11)
70. Ձեռ. թիւ 6324, Անկարարան, 1428 թ., գրիչ եւ ծաղկող՝ Թումայ Մինասենց, սրացող՝ Աբրահամ կրօնատր (թուղթ, 308 թերթ, 27.5x18.5)
71. Ձեռ. թիւ 6326, Մաշտոց, 1499 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, ծաղկող՝ Յովսէփ, սրացող՝ Խամօշ, (թուղթ, 409 թերթ, 26.5x18)
72. Ձեռ. թիւ 6402, Անկարարան, 1377 թ., գրիչ՝ Աւագ դպիր, ծաղկող եւ կազմող՝ Զարբարիա կրօնատր, սրացող՝ Յովհաննէս քահանայ, (թուղթ, 348 թերթ, 24x17.5)
73. Ձեռ. թիւ 6753 (երկու ձեռագիր), Աստուածաշունչ, ԺԷ դար (Ա), 1666 թ. (Բ), գրիչ՝ Նայրապետ (Բ), սրացող՝ Մելքիսէթ քահանայ (Ա), (թուղթ, ընդհանուրը՝ 409 թերթ, 19.5x15.3)
74. Ձեռ. թիւ 7585, Անկարարան, 1490 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, ծաղկող՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Դովլաթ խայթուն (թուղթ, 269 թերթ, 27x18)
75. Ձեռ. թիւ 7627, Անկարարան, 1460 թ., գրիչ՝ Յակոբ, ծաղկող՝ Մուրապ սարկաւագ, կազմող՝ Ներսէս սարկաւագ, սրացող՝ Խոնձա, (թուղթ, 337 թերթ, 26.5x17.5)
76. Ձեռ. թիւ 7632, Անկարարան, 1462 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ եւ որդի՝ Թումայ քահանայ, սրացող՝ Սարգիս, Խաչատուր, փեր Աւագ (եղբարք), (թուղթ, 323 թերթ, 27x18)
77. Ձեռ. թիւ 7846, Մաշտոց, 1461 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ եւ որդի՝ Թումայ քահանայ, սրացող՝ Խաչատուր Շարվանցի, (թուղթ, 346 թերթ, 28x18.8)
78. Ձեռ. թիւ 8888, Անկարարան, 1691 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, սրացողը՝ Սրեփաննոս փանուպէր, Գուլագիզ դարբին, (թուղթ, 337 թերթ, 26.5x18.1)
79. Ձեռ. թիւ 8928, Անկարարան, 1470 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, սրացող՝ փեր Մկրտիչ, (թուղթ, 291 թերթ, 26.8x18.4)
80. Ձեռ. թիւ 9093, Ճաշոց, 1412 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, կազմող՝ Դաիթ (1474 թ.), սրացողը՝ Յովհաննէս, Սրեփաննոս կրօնատրք, (թուղթ, 435 թերթ, 40x27)
81. Ձեռ. թիւ 9216, Անկարարան, 1455 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, սրացողը՝ Սրեփաննոս եւ Աբրահամ կրօնատրք, (թուղթ, 12 թերթ, 30.7x21.8)
82. Ձեռ. թիւ 9233, Յիշարակարան Անկարարանի, 1484 թ., գրիչ՝ Յակոբ կրօնատր, ծաղկող՝ Կարապետ վարդապետ, սրացողը՝ խօջայք Սաղաղայ, Թումարէկ (եղբարք), (թուղթ, 4 թերթ, 20x15.5)
83. Ձեռ. թիւ 9274, Անկարարան, 1454 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սրացող՝ Արոմ քանահայ, (թուղթ, 20 թերթ, 24.9x17.2)
84. Ձեռ. թիւ 10065, Ժողովածոյ, ԺԷ դ., գրիչ՝ փեր Սուքիաս, (թուղթ, 63 թերթ, 21.2x15.5)
85. Ձեռ. թիւ 10116, Անկարարան, 1368 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Սրեփաննոս քահանայ, (թուղթ, 17 թերթ, 27.5x21.5)
86. Ձեռ. թիւ 10451, Թովմայ Արծրունի, Պատմութիւն փանն Արծրունեաց, 1303 թ.,

- գրիչ՝ Դանիել կրօնաւոր, սրացող՝ Զաքարիա Ա կաթողիկոս Աղթամարցի, (թուղթ, 325 թերթ, 32.6x24.4)
87. Ձեռ. թիւ 10522, Անւարարան, ԺԳ դ., գրիչ՝ Զաքարիա կրօնաւոր, (թուղթ, 287 թերթ, 31x21.5)
88. Ձեռ. թիւ 10741, Շարակնոց, 1504 թ., գրիչ եւ ծաղկող՝ Յովսէփ, սրացող՝ Մեսրոպ քահանայ, (թուղթ, մագաղաթ, 291 թերթ, 13x8.4)
89. Ձեռ. թիւ 10956, Անւարարան, 1496 թ., գրիչ՝ Մարթէոս արեղայ, ծաղկող՝ Յովսէփ, կազմող՝ Արրահամ Արծկեցի, սրացող՝ Շիրին Կրկն, (թուղթ, 321 թերթ, 17x12.3)

ՁԵՆԱԳՐԱՏՈՒՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ, ԵՐՈՒՍԱԿԷՄ⁶⁷

Ձեռ. թիւ 1741, Ժողովածոյ (ծիսական), 1491 թ., գրիչ՝ Մարթէոս կրօնաւոր, սրացող՝ գրիչը, (թուղթ, 748 էջ, 8x13)

ՁԵՆԱԳՐԱՏՈՒՆ ՄԻՒԹԱՐԵԱՆՅ Ի ՎԵՆԵՏԻԿ⁶⁸

1. Ձեռ. թիւ 678 (հմր. 305) (նաև՝ Վարագ, Վան, Լիմ, Կրոց), Նաւարումն բանից նախնաց, 1849 թ., գրիչ՝ Ներսէս վրդ. Սարգսեան, սրացող՝ գրիչը, (թուղթ, 236 թերթ, 36x22.7)
2. Ձեռ. թիւ 770 (հմր. 475), Շարակնոց, 1512 թ., գրիչ եւ ծաղկող՝ Յովսէփ, սրացող՝ Յովհաննէս քահանայ, (թուղթ, 321 թերթ, 9.5x13)
3. Ձեռ. թիւ 1365 (հմր. 476), Շարակնոց, 1512 թ., գրիչ եւ ծաղկող՝ Յովսէփ, սրացողը՝ Մկրտիչ կրօնաւոր, Յովհաննէս քահանայ, (թուղթ, 321, 8.5x12.5)
4. Ձեռ. թիւ 652 (հմր. 1622) (նաև՝ Վարագ, Կրոց), Յովհան Ոսկերերան, 1848/9 թթ., գրիչ՝ Ներսէս Սարգիսեան, (թուղթ, 317, 22.5x35.2)

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ⁶⁹

1. Ձեռ. հմր. 55, Անւարարան, 1452 թ., գրիչ՝ Սրեփաննոս արեղայ, կազմող՝ Պարսամ արեղայ, սրացող՝ Մկրտիչ Կրկն, (թուղթ, 287, 27.2x18)
2. Ձեռ. թիւ 409 (հմր. 64), Անւարարան, 1475 թ., գրիչ՝ Ներսէս արքեպիսկոպոս, սրացող՝ Յովաննէս եւ Մկրտիչ քահանայ, (թուղթ, 334, 22x17)
3. Ձեռ. թիւ 527 (հմր. 66), Անւարարան, 1478 թ., գրիչ՝ Նայրապետ, սրացող՝ Դուռալաննէս, (թուղթ, 220, 26x18.2)
4. Ձեռ. թիւ 403 (78), Անւարարան, 1494 թ., գրիչ՝ Թումայ քահանայ, սրացող՝ Ներապետ, (թուղթ, 337, 26.7x18)

⁶⁷ Մայր Յուգակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972:

⁶⁸ Մայր Յուգակ հայերէն ձեռագրաց Մարենաղարանին Միխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, կազմ.՝ Բարսեղ վրդ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, հ. Դ, Ը, կազմ.՝ Սահակ վրդ. Ընմճմնեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1993, 1998:

⁶⁹ Յուգակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմ.՝ Սմբար Տեր-Անդրիսեան, Վիեննա, 1970:

ՉԵՌԱԳՐԱՏՈՒՆ Ի ԲՈՒՂԱԳՐԻՎ⁷⁰

Ձեռ. թիւ 5, Անկարան, 1454 թ., գրիչ՝ Գրիգոր քահանայ, սրացող՝ Արոմ քահանայ, (թուղթ, 319, 24x17)

ՕՔՍՖՈՐԴ, ԲՈՂԱԵՆ ԳՐԱՏՈՒՆ⁷¹

Ձեռ. թիւ 9, Անկարան, 1497 թ., գրիչ՝ Գրիգոր արեղայ, սրացող՝ Սրեփաննոս, (թուղթ, 286 թերթ)

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ, ՆԱՅԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ՖՈՆԴ⁷²

Ձեռ. թիւ 23, Անկարան, 1426 թ., գրիչ՝ Թումայ կրօնաւոր, սրացողը՝ Յովաննէս, Շնահոր:

**Կորած ձեռագրեր
ՄԵՐԱՍՏԻԱ, ՍԲ. ՆՇԱՆ ՎԱՆՔ⁷³**

Ձեռ. թիւ 3 (այլ ձեռագրի հետ միասին), Թուրք Պատուսի, 1309 թ., գրիչ
և ծաղկող՝ Դանիէլ կրօնաւոր, սրացող՝ Գրիգոր կրօնաւոր, (թուղթ, ընդհանուրը՝
355 թերթ, 23x16)

ԴԻԱՐԲԵՔԻՐ, ԱՐՂՆԻ⁷⁴

Ձեռ. թիւ 119 (հմր. 19), Անկարան, 1363 թ.

ԿԱՐԻՆ, ԱՐԾՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ⁷⁵

Ձեռ. թիւ 19, Անկարան, ԺԴ-ԺԵ դդ., գրիչ՝ Զաքարիա կրօնաւոր, սրացող՝
Յակովբ Եպիսկոպոս, (թուղթ, 257 թերթ, 26x20)

ՄՈՒՇ, Ս. ԱՌԱՔԵԼՈՅ-ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՆՔ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ⁷⁶

Ձեռ. թիւ 26, Անկարան, 1457 թ., գրիչ՝ Ներսէս արեղայ, սրացող՝ Խալիմ խաթուն և
Ղըսմաթ, (թուղթ, 25x18)

⁷⁰ Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլգարիա, կազմ.՝ Ներսէս Գասապեան, խմբ.՝ Օ. Եգանեան:

⁷¹ Catalogue of the Armenian manuscripts in the Bodleian library, by the rev. Sukias baronian and F. C. Conybeare F.B.A., Oxford, 1918.

⁷² Տվյալներն ըստ Լ. Խաչիկյանի, Տայերեն ձեռագրերի հիշարակարաններ, ԺԵ դար, հ. Ա, Եր., 1955:

⁷³ Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանոց ի Մերասիա, կազմ.՝ Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961:

⁷⁴ Die Armenischen handschriften des klostere von Argni (Arghana). Von dr. Friedrich Müller. Wien, 1896, 3.

⁷⁵ Յակոբ ծ. վ. Քուսեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Արմենեան վարժարանի ի Կարին, «Տանդէս ամսօրեայ», 1961-1962 թթ:

⁷⁶ Մուրաբեան Սահակ, Մարտիրոսեան Ն., Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղէմ, 1967: Յուցակի ձեռ. թիւ 28 փես ՄՄ ձեռ. թիւ 5417:

ՄԱՂՆԻՍԱՅ⁷⁷

Ձև. թիւ 97, Աղուեսագիրք, 1526 թ., գրիչ՝ Յակոբ կրօնատր, կազմող՝ Յուսէփ (Լիմ), (թուղթ, 319 թերթ, 24x17)

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ⁷⁸

1. Ձև. թիւ 107, Անկարան, 1392 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Թաղևոս կրօնատր, (թուղթ, 300 թերթ, 19x28)
2. Ձև. թիւ 168, Անկարան, 1446 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ
3. Ձև. թիւ 184, Անկարան, 1461 թ., գրիչ՝ Ներսէս, (թուղթ, 336 թերթ, 19x27)
4. Ձև. թիւ 228, Անկարան, ԺԵ դ., գրիչ՝ Սրեփաննոս արեղայ, սրացող՝ Էլեքսան, (թուղթ, 258 թերթ, 18x24):

ԸՍՏ Ղ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆԻ**Փիրղալեննան Ղ., Նօփարք հայոց, Կ.Պօլիս, 1888 թ.**

1. Նօփարք, էջ 57-58, թիւ 58, Ճաշոց, 1419 թ., գրիչ՝ Թումայ կրօնատր, սրացող՝ Մկրտիչ քահանայ
2. Նօփարք, էջ 128, թիւ 137, Յայսմատրք, 1442 թ., գրիչ՝ Թումայ կրօնատր
3. Նօփարք, էջ 134-135, թիւ 146, Ճաշոց, 1444 թ., գրիչ՝ Դանիէլ քահանայ, սրացող՝ Առաքել քահանայ
4. Նօփարք, էջ 136-139, թիւ 149, Մաշտոց, 1445 թ., գրիչ՝ Թումայ Մինասնց, սրացող՝ Յովհաննէս կրօնատր
5. Նօփարք, էջ 159-160, թիւ 149, Անկարան, 1449 թ., գրիչ՝ Ներսէս, սրացող՝ Նայրապետ քահանայ
6. Նօփարք, էջ 170, թիւ 189, Գրիգոր Նարեկացի, Մապեան ողբերգութեան, 1452 թ., գրիչ՝ Թումայ Մինասնց
7. Նօփարք, էջ 185, թիւ 218, Անկարան, 1457 թ., գրիչ՝ Ներսէս
8. Նօփարք, էջ 193, թիւ 230, Անկարան, 1459 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ
9. Նօփարք, էջ 199-200, թիւ 237, Ճաշոց, 1461 թ., գրիչ՝ Գրիգոր, սրացող՝ Ալբոմ կրօնատր
10. Նօփարք, էջ 216, թիւ 249, Մայր Մաշտոց, 1463 թ., գրիչ՝ Թումայ, սրացող՝ Կանուպէր Անիպոն
11. Նօփարք, էջ 229-230, թիւ 273, Ճաշոց, 1467 թ., գրիչ՝ Կիրակոս Զօշկանց
12. Նօփարք, էջ 231, թիւ 275, Ճաշոց, 1467 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, սրացող՝ Կանուպէր Յոհաննէս

⁷⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիա, Զմիռնիայ եւ ի շրջակայս նոցին, նկրգ.՝ Տրդատ եպս. Պալեան, կազմ.՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Երևան, 2002:

⁷⁸ Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմ.՝ Երուանդ Լալայեան, Թիֆլիս, 1915 թ.:

Փիրղալմնան Ղ., Նշխարք պապմութեան հայոց, ՄՄ, ձեռ. թիւ 6273⁷⁹

1. Նշխարք, էջ 108-111, Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց Սարգսի Շնորհալոյ, 1306 թ., գրիչ՝ Դանիէլ կրօնատր, սրացող՝ Զաքարիա կաթողիկոս Աղթամարցի
2. Նշխարք, էջ 324-325, Ճառընփիր, 1476 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, սրացող՝ Մինայ խաթուն
3. Նշխարք, էջ 330, Անկարան, 1484 թ., գրիչ՝ Նայրապետ արեղայ, սրացող՝ Գուհար
4. Նշխարք, էջ 334-335, Շարակնոց, 1485 թ., գրիչ՝ Յովհաննէս արեղայ, սրացող՝ Սրեփաննոս կրօնատր
5. Նշխարք, էջ 371-372, Մաշտոց, 1496 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Մուրադ

Փիրղալմնան Ղ., Նշխարք պապմութեան հայոց, ՄՄ, ձեռ. թիւ 6332⁸⁰

էջ 222, թիւ 386, Մայր Մաշտոց, 1501 թ., գրիչ՝ Կարապետ քանահայ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՅԼԵԿԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

1. Անկարան, 1358 թ., գրիչ՝ Կարապետ կրօնատր, սրացող՝ Թանգ խաթուն⁸¹
2. Ճառընփիր, 1389 թ., գրիչ՝ Կարապետ քահանայ, սրացող՝ Սրեփաննոս միայնակեաց⁸²
3. Անկարան, 1418 թ., գրիչ՝ Թումայ⁸³
4. Անկարան, 1479 թ., գրիչ՝ Գրիգոր արեղայ, սրացող՝ Առաքել քահանայ⁸⁴
5. Անկարան, 1494 թ., սրացող՝ Յոհաննէս⁸⁵
6. Անկարան, 1495 թ., գրիչ՝ Թումայ⁸⁶
7. Ճառոց, 1447 թ., գրիչ՝ Սրեփաննոս⁸⁷:

79 Տվյալներն ըստ Լ. Խաչիկյանի, Նայերն ձեռագրերի հիշարակարաններ, ԺԴ դար, Երևան, 1950 թ., ԺԵ դար, հ. Բ-Գ, Եր., 1958, 1967: Տես նաև Մաթևոսյան Ա, Գրչության փղանունների այբբենական բարբարան, Մաշտոցի անվան Մարենադարան, անփիպ:

80 Տես նաև Մաթևոսյան Ա, Գրչության փղանունների այբբենական բարբարան, Մաշտոցի անվան Մարենադարան, անփիպ:

81 Մաքսուղեան Մեսրոպ վրդ., Ագուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը, «Արարատ», 1911 թ., էջ 562-563, Ագուլիս, 18:

82 Տե՛ս անդ, էջ 759-765, Ագուլիս, 24:

83 Ե. Լալայեան, Զավախք, հ. Ա, Թիֆլիս, 1897, Բ., էջ 310:

84 Ս. Նայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գաւառ, Էջմիածին, 1894, էջ 362:

85 Մ. Բարխուդարյան, Արցախ, 1895, էջ 112:

86 Գ. Սրուանձրեանց, «Թորոս Աղբար», Բ, Կ.Պոլիս, 1885, էջ 446-447:

87 Տվյալն ըստ Լ. Խաչիկյանի, Նայերն ձեռագրերի հիշարակարաններ, ԺԵ դար, հ. Ա, Եր., 1955, էջ 609: